| Միմոնյան Արտուշ Էդվարդի |  |  |  |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի |  |  |  |

Որոշումն ընդունված է՝ կողմ-.....8..... դեմ-.....0..... ձեռնպահ-.....0


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հունվարի 19  
Ջերմուկ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 հունվարի 2018թ. N 10-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ)  
ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ)  
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ





Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 35-րդ ենթակետի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:


Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն, հայրանուն   | կողմ                 | դեմ | ծեռնպահ |
|------------------------------|----------------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի        | <i>բաբայան</i>       |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | <i>բաբաջան</i>       |     |         |
| Բազրատյան Արտակ Կառլենի      | <i>բազրատյան</i>     |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի  | <i>բունիաթյան</i>    |     |         |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի  | <i>գևորգյան</i>      |     |         |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի      | <i>գրիգորյան</i>     |     |         |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | <i>համբարձումյան</i> |     |         |

|                                |                                                                                   |  |  |
|--------------------------------|-----------------------------------------------------------------------------------|--|--|
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի |  |  |  |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի         |  |  |  |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի        |  |  |  |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի        |  |  |  |


Որոշումն ընդունված է՝ կողմ-.....8..... դեմ-.....0..... ձեռնպահ-.....0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝





2018 թվականի 19  
Ձեռնիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունվարի 2018թ. N 11-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 40-րդ ենթակետի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զերմուկ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն, հայրանուն     | կողմ            | դեմ | ձեռնպահ |
|--------------------------------|-----------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի          | <i>բաբայան</i>  |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի   | <i>բաբաջան</i>  |     |         |
| Բազրադյան Արտակ Կառլենի        | <i>բա</i>       |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի    | <i>բաբայան</i>  |     |         |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի    | <i>գեորգյան</i> |     |         |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի        | <i>գր</i>       |     |         |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի   | <i>համ</i>      |     |         |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | <i>հով</i>      |     |         |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի         | <i>սար</i>      |     |         |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի        | <i>սիմ</i>      |     |         |

Ստեփանյան Գագիկ Ասեփանի


*[Signature]*

Որոշումն ընդունված է՝ կողմ-.....*8*..... դեմ-.....*0*..... ձեռնպահ-.....*0*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

*[Signature]*

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



2018 հունվարի 19  
Ջերմուկ

## Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

**հանրային սնունդ** (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

**հանրային սննդի ծառայություն**՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

**խոհարարական արտադրանք**՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

**ճաշացուցակ**՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

**հանրային սննդի օբյեկտներ**՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

**վաճառող**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրականացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք, համայնքի ղեկավարի կողմից հաստատված և անհատ ձեռնարկատերերին և/կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում: Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:



8. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

9. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:

11. Առանձին շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:

12. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:

13. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

14. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին): Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

15. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պաշտոնի նշմամբ:

16. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:

17. Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

18. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

19. Աշխատողներից բարձենը, խոհարարը, հրուշակագործը, մատուցողը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

20. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

21. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:


22. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

23. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Գ. ԽԱՅԵՎՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 հունվարի 2018թ. N 12-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**






1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Զերմուկի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Զերմուկի համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» N 46-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն, հայրանուն   | կողմ           | դեմ | ծեռնպահ |
|------------------------------|----------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի        | <i>բաբայան</i> |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | <i>բաբայան</i> |     |         |
| Բազրատյան Արտակ Կառլենի      | <i>ԲԶ</i>      |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի  | <i>բաբայան</i> |     |         |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի  | <i>ԳԵ</i>      |     |         |

|                                |                                                                                   |  |  |
|--------------------------------|-----------------------------------------------------------------------------------|--|--|
| Գրիգորյան Արմեն Գրիշայի        |  |  |  |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի   |  |  |  |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի |  |  |  |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի         |  |  |  |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի        |  |  |  |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի        |  |  |  |

Որոշումն ընդունված է՝ կողմ-..... ջ..... դեմ-..... ջ..... ձեռնպահ-..... ջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Կ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հունվարի 19  
Ջերմուկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի (այսուհետև՝ համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

- 1) համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպումը.
- 2) պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը.
- 3) համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցումը.
- 4) գոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը.
- 5) միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:

3. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

- 1) միջոցներ են ձեռնարկում գոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- 2) աջակցություն են ցուցաբերում միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի վճարման կազմակերպմանը.
- 3) նպաստում են համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության կազմակերպմանը.
- 4) տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը:

4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10 %-ը:

5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական



միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների և (կամ) համաձայնությամբ առկայության դեպքերում:

6. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական և գույքային միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

7. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը (այսուհետ՝ նախաձեռնող) համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

10. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 9-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին:

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

11. Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները կարող է ավագանուն ուղղված դիմումը ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

12. Համայնքի ավագանին սույն կարգով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է միայն



սույն կարգի 13-րդ կետում նշված սոցիալական օգնության տրամադրման հանձնաժողովի եզրակացության դեպքում և քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Համայնքի ավագանին զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչներ, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14. Համայնքի սոցիալապես անապահով բնակչի հուղարկավորության կազմակերպման համար օգնության տրամադրման համար համայնքի ղեկավարը կարող է իր որոշմամբ նրա ընտանիքին հատկացնել մինչև հարյուր հազար դրամի սոցիալական օգնություն. նա այդ մասին հաղորդում է ներկայացնում ավագանու առաջիկա նիստում, որը ավագանու կողմից ընդունվում է որպես ի գիտություն:

15. Համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ավագանին կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

16. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումները մշտական գործող հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո, տալիս է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն, նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:

17. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

1) համայնքի բնակիչ հանդիսանալը.

2) սոցիալապես անապահով ընտանիք հանդիսանալու վերաբերյալ սոցիալական օգնության տրամադրման մշտական գործող հանձնաժողովի դրական եզրակացությունը.

3) սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը.

4) համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ համատեղ տնտեսություն չվարելը:

18. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է հիստուն հազար դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամներին:



19. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան մեկ անգամ՝ ոչ ավելի քան տարեկան ուսման վարձի 50%-ի չափով: Ուսման վարձի հատկացում չի արվում համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն:

20. Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե՝ համայնքի ղեկավարի անձնական միջոցներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում են միայն ավագանու որոշմամբ:


ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



*[Handwritten signature]*

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 հունվարի 2018թ. N 13-Ն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 30-րդ, 42-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշման մեջ լրացումները և փոփոխություն կատարելու մասին» N 680-Ն որոշման պահանջներով՝ ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն, հայրանուն     | կողմ            | դեմ | ծեռնպահ |
|--------------------------------|-----------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի          | <i>բաբայան</i>  |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի   | <i>բաբայան</i>  |     |         |
| Բազրատյան Արտակ Կառլենի        | <i>ԲԶ</i>       |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի    | <i>բաբայան</i>  |     |         |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի    | <i>Գևորգյան</i> |     |         |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի        | <i>ԳԴ</i>       |     |         |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի   | <i>ՀԴ</i>       |     |         |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | <i>ՀԴ</i>       |     |         |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի         | <i>ՍԴ</i>       |     |         |

|                         |                                                                                   |  |  |
|-------------------------|-----------------------------------------------------------------------------------|--|--|
| Միտոնյան Արտուշ Էդվարդի |   |  |  |
| Մտեփանյան Գագիկ Ստեփանի |  |  |  |


Որոշումն ընդունված է՝ կողմ-.....8..... դեմ-.....0..... ձեռնպահ-.....0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 իունվարի 19  
Ձերմուկ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունվարի 2018թ. N 14-Ն


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՈՒ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 41-րդ ենթակետի, «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝


| ազգանուն, անուն, հայրանուն     | կողմ           | դեմ | ձեռնպահ |
|--------------------------------|----------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի          | <i>բաբայան</i> |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի   | <i>բաբաջան</i> |     |         |
| Բազրատյան Արտակ Կառլենի        | <i>Բ</i>       |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի    | <i>բաբայան</i> |     |         |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի    | <i>Գ</i>       |     |         |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի        | <i>Գ</i>       |     |         |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի   | <i>Հ</i>       |     |         |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | <i>Հ</i>       |     |         |

|                         |                                                                                   |  |  |
|-------------------------|-----------------------------------------------------------------------------------|--|--|
| Սարգսյան Համիկ Ժորայի   |   |  |  |
| Սիմոնյան Արտուր Էդվարդի |  |  |  |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի |  |  |  |

Որոշումն ընդունված է՝ կողմ՝.....8..... դեմ՝.....0..... ձեռնպահ՝.....0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ



2018 իունվարի 19  
Ջերմուկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 հունվարի 2018թ. N 15-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ,  
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

| հողամասի<br>օտարման<br>նպատակը             | հողամասի<br>գտնվելու<br>վայրը | մակերեսը,<br>հա | մեկնարկային<br>գինը,<br>դրամ | հողամասի<br>ծածկագիրը | նպատակային<br>նշանակությունը | գործառնական<br>նշանակությունը<br>կամ<br>հողատեսքը |
|--------------------------------------------|-------------------------------|-----------------|------------------------------|-----------------------|------------------------------|---------------------------------------------------|
| գյուղատնտեսական<br>գործունեության<br>համար | գ. Գնդեվազ                    | 0,0225          | 2000                         | 10-016-<br>0221-0011  | գյուղատնտեսական              | արոտավայր                                         |
| գյուղատնտեսական<br>գործունեության<br>համար | գ. Գնդեվազ                    | 1,357           | 30 000                       | 10-016-<br>0212-0131  | գյուղատնտեսական              | արոտավայր                                         |
| գյուղատնտեսական<br>գործունեության<br>համար | գ. Գնդեվազ                    | 0,67507         | 235 000                      | 10-016-<br>0212-0089  | գյուղատնտեսական              | վարելահող                                         |
| գյուղատնտեսական<br>գործունեության<br>համար | գ. Գնդեվազ                    | 6,24355         | 118 000                      | 10-016-<br>0220-0109  | գյուղատնտեսական              | արոտավայր                                         |
| գյուղատնտեսական<br>գործունեության<br>համար | գ. Գնդեվազ                    | 0,99243         | 546 000                      | 10-016-<br>0208-0092  | գյուղատնտեսական              | կորիզավոր                                         |
| գյուղատնտեսական<br>գործունեության<br>համար | գ. Գնդեվազ                    | 0,63521         | 350 000                      | 10-016-<br>0220-0108  | գյուղատնտեսական              | կորիզավոր                                         |



|                                      |                               |         |           |                  |                             |                          |
|--------------------------------------|-------------------------------|---------|-----------|------------------|-----------------------------|--------------------------|
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Գնդեվագ                    | 1,98947 | 1 094 000 | 10-016-0220-0111 | գյուղատնտեսական             | կորիզավոր                |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Գնդեվագ                    | 0,3739  | 206 000   | 10-016-0208-0091 | գյուղատնտեսական             | կորիզավոր                |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Գնդեվագ                    | 0,18354 | 101 000   | 10-016-0208-0093 | գյուղատնտեսական             | կորիզավոր                |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Գնդեվագ                    | 0,94461 | 520 000   | 10-016-0220-0110 | գյուղատնտեսական             | կորիզավոր                |
| Հանգստի գոտու ստեղծման համար         | Գնդեվագ, Մայրաց փողոց N 3/2   | 1,8     | 1 200 000 | 10-016-0605-0039 | հատուկ պահպանվող տարածքների | հանգստի համար նախատեսված |
| Հանգստի գոտու ստեղծման համար         | Գնդեվագ, Մայրաց փողոց N 3/2/1 | 0,5     | 350 000   | 10-002-0605-0040 | հատուկ պահպանվող տարածքների | հանգստի համար նախատեսված |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն, հայրանուն     | կողմ                | դեմ | ձեռնպահ |
|--------------------------------|---------------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի          | <i>բաբայան</i>      |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի   | <i>բաբաջան</i>      |     |         |
| Բազրատյան Արտակ Կառլենի        | <i>BA</i>           |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի    | <i>բաբաթյան</i>     |     |         |
| Գևորգյան Արտավազդ Կարազդատի    | <i>գևորգյան</i>     |     |         |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի        | <i>GR</i>           |     |         |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի   | <i>HS</i>           |     |         |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | <i>հովհաննիսյան</i> |     |         |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի         | <i>սարգսյան</i>     |     |         |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի        | <i>սիմոնյան</i>     |     |         |

Ստեփանյան Գագիկ Ստեփանի

Որոշումն ընդունված է՝ կողմ՝ 8..... դեմ՝ 0..... ձեռնպահ՝ 0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 իունվարի 19  
Ջերմուկ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ-ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունվարի 2018թ. N 16-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ  
ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՐԴԻԵԼՈՒ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ և 48 հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված Կարգի 46.2 կետի «ա» ենթակետը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/4 հասցեու գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 4 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությամբ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման ամսական վճարի գինը սահմանել 5 000 (հինգ հազար) դրամ, ժամկետը՝ 2021 թվականի հունվարի 1-ը, նպատակը՝ սպասարկման օբյեկտ տեղադրելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն, հայրանուն   | կողմ       | դեմ | ձեռնպահ |
|------------------------------|------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի        | բացակա     |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա     |     |         |
| Բագրատյան Արտակ Կառլենի      | չի վճարվել |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի  | բացակա     |     |         |

Գևորգյան Արտավազի Վարազդատի

600000

Գրիգորյան Արմեն Գրիշայի

2/ 4-11-46

Համբարձումյան Մխիթար Սամվելի

46000

Հովհաննիսյան Նարեկ Հարությունի

20000

Սարգսյան Հասմիկ Ժորայի

20000

Սիմոնյան Արտուշ Էդվարդի

40000

Ստեփանյան Գագիկ Ստեփանի


20000

Որոշումն ընդունված է՝ կողմ- ..... 6..... դեմ-..... 0... ձեռնպահ- .... 0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 իունվարի 19  
Ջերմուկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունվարի 2018թ. N 17-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի 2018 թվականի վարչական բյուջեից որպես համաֆինանսավորում հետևյալ դրամական հատկացումները կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝

ա) համայնքի Հերիեր գյուղի միջնակարգ դպրոցին կից գործող նախակրթարանին 300.000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ հաճախող երեխաների սննդի կազմակերպման համար,

բ) Ջերմուկ համայնքում գործող «Օրբան» համատիրությանը՝ 3840.000 /երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ (Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ 26/1 և 26/2 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղակայված՝ բջջային օպերատորների կողմից վճարվող վարձավճարներին համարժեք)՝ համայնքի բնակֆոնդի սպասարկման ծառայությունների իրականացման համար:

գ) Ջերմուկ գործուղված և «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում աշխատանքի անցած բժշկի կողմից բնակության համար վարձակալված բնակարանի վարձակալական վճարը փոխհատուցելու համար՝ ամսական 30 000 (երեսուն հազար) դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| Ավագանու անդամներ            | Կողմ              | դեմ | ձեռնպահ |
|------------------------------|-------------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի        | <i>Բաբայան</i>    |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | <i>Բաբաջանյան</i> |     |         |
| Բագրատյան Արտակ Կառլենի      | <i>Բագրատյան</i>  |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի  | <i>Բունիաթյան</i> |     |         |

|                                |  |  |  |
|--------------------------------|--|--|--|
| Գնորգյան Արտավազդ Վարազդատի    |  |  |  |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի        |  |  |  |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի   |  |  |  |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի |  |  |  |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի         |  |  |  |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի        |  |  |  |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի        |  |  |  |


Որոշումն ընդունված է՝ կողմ- 8 ..... դեմ- 0 ..... ձեռնպահ- 0 .....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԳԱՐՆ



Վ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հունվարի 19  
Ջերմուկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունվարի 2018թ. N 18-Ա


ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻԶ ԼԱՐԻՍԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ  
ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Զերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետը և Զերմուկ քաղաքի բնակիչ Լ. Վարդազարյանի դիմումը՝ ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Զերմուկ համայնքի Զերմուկ քաղաքի բնակիչ, զոհված զինծառայողի ծնող Լարիսա Վարդազարյանի ընտանիքին հատկացնել դրամական օգնություն՝ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:


Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն, հայրանուն     | կողմ               | դեմ | ծեռնպահ |
|--------------------------------|--------------------|-----|---------|
| Բաբայան Կավկազ Զավենի          | <i>Բաբայան</i>     |     |         |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի   | <i>Բաբաջան</i>     |     |         |
| Բագրատյան Արտակ Կառլենի        | <i>[Signature]</i> |     |         |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի    | <i>Բաբայան</i>     |     |         |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի    | <i>[Signature]</i> |     |         |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի        | <i>[Signature]</i> |     |         |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի   | <i>[Signature]</i> |     |         |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | <i>[Signature]</i> |     |         |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի         | <i>[Signature]</i> |     |         |

|                         |                                                                                    |  |  |
|-------------------------|------------------------------------------------------------------------------------|--|--|
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի |  |  |  |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի |  |  |  |

Որոշումն ընդունված է կողմ- 8 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հունվարի 19  
Ջերմուկ

